Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112568615, 2112514047 և 2112515023 որոշումներն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<29>> 04 2021թ. 7-13- 6356 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Ստեփան Կարապետյանի ՄԴ/29848-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հովսեփյան փողոցի 6-րդ շենքի 43-րդ բնակարանի բնակիչ Ստեփան Կարապետյանը, դիմումով խնդրում է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112568615, 2112514047 և 2112515023 որոշումները՝ նշելով, որ իր մոտ հայտնաբերվել է մահացու հիվանդություն և Երևան քաղաքից բժշկի այց կատարելու վերադարձի ճանապարհին, վատ ինքնազգացողության պատճառով կատարել է երեք իրավախախտում:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմք չի կարող հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը,որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 68-րդ կետի համաձայն՝ բնակավայրերում տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրվում է 60կմ/ժ ոչ ավելի արագությամբ:

Հայաստանի Հանրապետությունում տեղադրված բոլոր արագաչափ սարքերը ստուգաչափված են ՀՀ էկոնոմիկայի նախարարության <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի կողմից և դրանց արձանագրած տվյալները համապատասխանում են իրականությանը և տրանսպորտային միջոցների արագության փաստացի արագությանը:

<<Չափումների միասնականության ապահովման մասին>> օրենքի պահանջներով պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում շահագործվող բոլոր արագաչափ սարքերը սահմանված ժամկետում և կարգով ստուգաչափված են:

Այսպիսով՝ դիմումատուի վարած <<VOLVO>> մակնիշի 81ST818 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը 29.03.2021թ-ին՝ ժամը 09:48-ին, Արագածոտնի մարզի Ագարակ գյուղի հատվածում և 17.03.2021թ-ին՝ ժամը 17:24-ին, Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Երևանյան խճուղու հատվածում երթևեկելով համապատասխանաբար 85կմ/ժ և 73կմ/ժ արագությամբ, հանելով արագաչափ սարքի հնարավոր սխալանքի 10կմ/ժ չափը՝ 60կմ/ժ առավելագույն արագություն սահմանված ճանապարհահատվածում, գերազանցել է երթևեկության սահմանված արագությունը համապատասխանաբար 15կմ/ժ-ով և 3կմ/ժ-ով, ինչի համար պատասխանատվություն է նախատեսված <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ուստի դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին թիվ 2112568615 և 2112515023 որոշումներն իրավաչափ են և օրինական:

Ըստ արագաչափ սարքի տեխնիկական բնութագրի՝ այն փոխադրամիջոցը, որի արագությունը համարվում է չափված, պետք է առնվազն մասամբ գտնվի նկարի երրորդ քառորդում՝ ընթացքի ուղղությամբ (գնահատման գոտի): Գնահատման գոտում չպետք է լինի միևնույն ուղղությամբ շարժվող որևէ այլ փոխադրամիջոց՝ նույնիսկ մասամբ: Հակառակ ուղղությամբ շարժվող փոխադրամիջոցները կարող են գտնվել գնահատման գոտում:

Վիճարկվող որոշումների անհատական ծածկագրի տակ զետեղված լուսանկարի լրացուցիչ ուսումնասիրությամբ հստակ է դառնում, որ չի կարող կասկածի տակ դրվել իրավախախտումները հենց դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցով կատարված լինելու հանգամանքը, քանի որ միայն վերջինիս վարած ավտոմոբիլն է գտնվում լուսանկարի գնահատման գոտում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4--րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելը, առաջացնում է տուգանքի նշանակում, յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար՝ նվազագույն աշխատավարձի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4--րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագությունը 11-30 կմ/ժ-ով գերազանցելը, առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> թիվ 955-Ն որոշման 40-րդ կետի համաձայն՝ շրջադարձից կամ հետադարձից առաջ վարորդը պետք է նախապես զբաղեցնի երթևեկության տվյալ ուղղության համար նախատեսված երթևեկելի մասի համապատասխան եզրային գոտին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) մուտք է գործում շրջանաձև երթևեկությամբ խաչմերուկ.

2) ճանապարհային նշանով կամ գծանշմամբ թույլատրվում է դա կատարել նաև այլ գոտիներից:

Իրավախախտումն ամրագրած տեսանյութը փաստում է, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 17.03.2020թ-ին ժամը՝ 15.09-ին Երևան քաղաքի Թումանյան – Կողբացի փողոցների խաչմերուկի հատվածում ձախ շրջադարձ է կատարել ձախ եզրային չհանդիսացող գոտուց, որի հետևանքով ստեղծել է երթևեկության մյուս մասնակիցների համար ակնհայտ խոչընդոտ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից

երթևեկությունն սկսելու կամ մանևր կատարելու, ինչպես նաև հետընթաց վարման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը թեև սույն օրենսգրքով կամ վարչական իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն սահմանող այլ նորմատիվ ակտերով նախատեսված գործողություն է կատարել, սակայն գործել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ մի այնպիսի վտանգ վերացնելու համար, որը սպառնացել է պետական կամ հասարակական կարգին, սոցիալիստական սեփականությանը, քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին, կառավարման սահմանված կարգին, եթե այդ վտանգը տվյալ հանգամանքներում չէր կարելի վերացնել այլ միջոցներով և եթե հասցված վնասը կանխված վնասի համեմատությամբ ավելի նվազ կարևորություն ունի:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

Վարչական վարույթի ընթացքում չի հիմնավորվել դիմումատուի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտումը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարելու հանգամանքը ապացույցների բացակայության պատճառով:

Այսպիսով, հիմնավորվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումներն իրավաչափ են և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 2112568615, 2112514047 և 2112515023 որոշումները թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Սույն որոշման օրինակն ուղարկել Ստեփան Կարապետյանին:

Ե.Կարապետյան

Կատարող՝ Հ.Կարապետյան
Հեռ. 011544783